

ՏԱՍՆ ԵՒ ԵՐԹԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Պայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

Մեկան գինը 10 րուբլ, կէս տարւանը 6 րուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Քիֆիլիում գրում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мелкъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի գիծ գիւղական
կեանքից. Նամակ Դորպատից. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վանից ուղարկված նոր
հեռագիր. Անգլիական համայնքների ժողովը. Տե-
ղեկութիւններ թիւրքաց չայաստանից. Արտաքին
լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.
—ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պա-
րիզից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԳԻՇ ԳԻՒԼԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Մի քանի տարի է արդէն, ինչ մեր մասուլը
ժամանակ առժամանակ ձայն է բարձրացնում
ինքնակոչ փաստաբանների, ժողովուրդը կեղծող
զանազան աղաների ու մի քանիսի դէմ
Բայց, զփառաբար, այդ արդարացի ձայնը և բո-
ղոքը դեռ չէր հասնում իրանց նպատակին հաս-
նելուց. պարզապէս միջոցներ չկային իրա-
քանիւր տարի աճելով աճում է, իւրաքանչիւր
տարի նոր ոյժեր են մտնում այդ կոնտինգէնտի
մէջ՝ պարագիտիկայի բոլորովին նոր պրոգրամայով
ու ծրագրով: Դրանց հունձը շատ առատ է, և
բաշտ ու հեղեղները դրանց համար երբեք չեն
լինում: Միամիտ գիւղացուն խաբելը դժուար չէ,
նրան ինտրիգաների լաբիրինթոսի մէջ գցելը մի
շատ հեշտ ու սովորական բան է աղա-փաստա-
բանի համար: Բաւական է մի ամենաշնչին տա-
րածայնութիւն կրկնել. համագիւղացիների մէջ, մի
անշնչան ձախորդութիւն գիւղի հասարակական
գործերում,—մեր փաստաբան միջոցաբեղը արդէն
պատրաստ է այդտեղ: Յիմնական ու քառասուն-
կան թվականների կոդէկսներով զինաւորված՝ նա
թող է փչում խեղճների աչքերին, լուռ ուղտ է
չինում, պէ՛տք կրակ է դարձնում: Գիւղացու ա-
սած, ու այդպիսով սկսվում են անվերջ դատեր,
երկու կողմերն էլ քանդվում, չքաւորանում են
յոգոտ աղա-փաստաբանի, սրա վիշապային ա-
զահութիւնը բաւականութիւն տալու համար:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐԻԶԻՑ

VII

Պարիզի ցուցահանդիսի ամենայնախաղաղ մա-
սը՝ Խնամախոսների հարթավայրն է (Esplanade
des Invalides): Դրա պատճառն այն է, որ այդ
մասը ներկայացնում է եւրոպացուն, մասնա-
կանը Պարիզի պէս մեծ մայրաքաղաքի բնակիչ
համար առանձին հետաքրքրութիւն իր արեւելեան
բաժնով, իր արեւելեան շինութիւններով, հեռա-
ւոր կիսավայրերի երկրների ներկայա-
ցուցիչներով: Այդտեղ կը տեսնէք և Ալժիրի բա-
ժինը, և Տունիսի բաժինը, և արեւելեան ծած-
կած բազարը, և Նապոլի կղզու բնակիչների մի-
գիւղը, և Կոստանտինուպոլի մի տաճար և մասնա-
կան մի միջնաբերդ, կը լսէք և մեր կովկասեան ե-
րաժշտութեան պէս զուգուրն ու դէօլը, կամ
հալապիկների՝ փայտեղէն գործիքների վրա գլուխ
տանող երաժշտութիւնը.... Այդտեղ կարող էք
անուշ անել արեւելեան այլ և այլ իմիջներ՝ կա-
ֆէ, շաբբաթ, ծիսել արեւելեան ծիսախոս,—և
զմայլով կիսամերկ և բաւական կեղտոտ ու գը-
լտած սեւամորթ տունիսցիների ու նրանց գրե-
թէ կատարելապէս մերկ մանուկների տեսարա-
նով:

Այդ է որ գլխաւորապէս գրաւում է Պարիզի
բնակիչներին, մասնաւոր միջին դասակարգի ուշա-
գրութիւնը: Այդտեղ, օրվայ օր ժամին էլ գնալը,
միշտ այցելողների մեծ բազմութիւն կը գտնէք:

Այդ հրէշները, ի հարկէ, օտարադէպ ոչինչ չեն գը-
տնում այդտեղ. նրանց համար շատ բնական է
այսօրվայ ուշեւոր գիւղացուն վաղը յետին չքա-
ւորութեանը հասցնել, միայն թէ իրանք իրանց
նպատակին հասած լինեն....

Այնպիսով ինչու ու անամոթութիւնը այնպէս է
հասնում, որ այդ պարագիտները երկու կողմե-
րին էլ խորհուրդներ են տալիս, պարմանալի
ճարտիկութեամբ մէկի մօտ միտքով թշուառի ձե-
ւանալով և հակառակը: Ամեն մի գիւղում կա-
րելի է շատ գործեր գտնել, որոնք տարիներէն ի
վեր շարունակվում են և կատարւած չը կայ, որ է-
լի շատ տարիներ կը շարունակվին, չնայած մի
քանի հերոսների, որոնք չժողի աւագից ստեղծե-
ցին այդ գործերը, փչելով, տունի նրանց բանա-
կան, ազատ և անմահ հողի ու կիսանք, ի հա-
րկէ, իրանց շահերին յարմարեցնելով այդ բոլորը:
Հէնց այսօր էլ այդ գիւղերի պարագիտները չեն
զաղարում լանմահ հողի՝ ներշնչել իրանց հան-
ճարեղ ձեռնարկութիւններին, գոցէ և մտադիր
էլ չեն երբեք հանդիստ տալ իրանց ստեղծա-
գործ աշխատանքին: Դժուար է հասնում ինչ
միջոցներով, և ինքնակոչ աղված կատարները, ա-
մեն տեղ և միշտ մասնաւոր գործերից շինում են
հասարակական գործեր, գիւղացիների կուսակ-
ցութիւններ են բաժանում, և կարմանալի հըմ-
տութեամբ սկսում են օգտվել կուսակցական
երկպառակութիւններից: Գիւղացին անզաւար
զանգառովում է, ասելով՝ լմեց պրանքը քանդեցին,
քաղաքացիներ արին, կերտն մեղ, մեր արկնը խը-
մեցին, էլի մեզ բայ չեն թողում, մեր ետինն
դրանցից թափվում է, մեր խիզան (երեխէքը)
ա մնացել, որ ետի (գերի) տանեն: Դա իրա-
ւացի են գիւղացու զանգառները:

Այդ տիւրը երեւոյթը, պէտք է խոստովանած,
աչքի է ընկնում ամեն մի քաղաքագիտում.
աղա-միրզաները մեր գիւղացիական ժողովուրդին
հասցրել են բարոյական անկման, այդ բարի
բուն նշանակութեամբ: Վաղեմի պարագիտ
գիւղացին այսօր ընդունակ է հազար ու մի գեղ-
ժուկների, ստախոսութեան, ուրացման, տուած
երգումից յետ կանգնելու,—մի խօսքով ամեն մի

Մայրաքաղաքի բնակիչը, Պարիզի փոքր բուրժու-
ան, իր ամբողջ ընտանիքով, զաւիթ, զմայլվում
է կիսավայրերի ներսերում տեսարանով....

Նոյն ինվալիդների հարթավայրի միւս մասերը
անհամեմատ աւելի հետաքրքիր են, սակայն ամ-
բողջ նրանց չէ յաճախում նոյնչափ, որչափ ամ-
րեւելեան բաժինը և Ֆրանսիական գաղութականու-
թիւնների բաժինը: Արեւելեան բաժինը ներկա-
յացնում է Պարիզի բնակչի համար նորութեան
հրապոյր, այն ինչ հարթավայրի միւս մասերը
նայելու ժամանակ պէտք է աւելի կենտրոնաց-
նել իր ուղեղն ու մտածողութիւնը, պէտք է ու-
սումնասիրել ամեն բան: Առաջին բաժինը այցե-
լելիս՝ կարելի է զուգահեռաբար, իսկ մնացածները
պահանջում են որ մարդ խորասուզվի իր մը-
տածմունքների մէջ և ուշադրութեամբ ուսումնա-
սիրէ իր տեսածը: Արեւելեան բաժնից յետոյ ա-
մենից յաճախվածը՝ Ֆրանսիական պատերազմա-
կան միջնորդութեան ցուցահանդէսն է.... Այդ-
տեղ շարժառիթն է Ֆրանսիացու ազգասիրու-
թիւնը և պատերազմասիրութիւնը....

Բայց ինձ նախ հետաքրքրեց Ֆրանսիական
ներքին գործերի միջնորդութեան ցուցահանդէսի
բաժինը: Նա պարունակում է իր մէջ առ ող-
ջապա հակառակ հարուստ բաժին, ամեն տե-
սակ նորագիտ մեքենաներով, նմանապէս ջրե-
րով բժշկվելու (Balnéothérapie) բաժինը, իր հը-
րաշալի կատարելագործված գործիքներով, վան-
նաներով և այլն, աղքատներին խնամելու բաժի-
նը, աղքատանոցների միջնորդութիւնը և վերջապէս
Ֆրանսիայի բոլոր նահանգների (Ալժիրիկան գաղ-
թականութիւնների հետ միասին) մանկական բո-
ղոքապահան խնամքի և դաստիարակութեան
պատմութիւնը: Այդտեղ կը գտնէք անհրաժեշտ

անագիւր ու անբարոյական միջոց սուրբ է նրա
համար, երբ նա պէտք է զգում իր նպատակին
հասնել, իր հակառակորդի վարկը զցնել, նրան
անպոքի վրէժը: Բաւական է մի ամենաշնչին
հողային կամ այլ վէճ, որ մեր վաղեմի պարագա-
միտ գիւղացու մէջ եւս զանազան պարագիտ
է գտնում: Դժուար է հասնում ինչու և որչափ
ներքին օրոգայթներ.... Եւ մինչև անգամ շատ
տեղ ինքն գիւղացին այնքան համացել է, որ եր-
բնիմ առանց միջոցների էլ է հեռաւ գնում,
ինքն էլ է զգակվել հոտը առել ու դիւանի
դուռը ճնշել, և այդ բոլորի հետեւանքն է ան-
վերջ դատերի բազմապատկումը, որը այժմ կլանում է
մեր ժողովրդի ոյժերը, քանզում է նրան թէ
բարոյապէս և թէ նիւթապէս, երկպառակութիւն
զցնելով գիւղերում և գրիկով գիւղացուն իր խա-
ղաղ աշխատանքից....

Ս. Տ.

ՆԱՄԱԿ ԴՕՐՊԱՍԻՑ

Յունիսի 22-ին

Վերջին տարիների ընթացքում կովկասի երի-
տասարդների ձգտումը դէպի համալսարանները
քանի գնում այնքան աւելի մեծանում, զարգա-
նում է, չը նայելով որ դառն փորձերը ցոյց են
տալիս, որ համալսարանական դիպլոմի ձեռք
բերելը, մասնաւորապէս կովկասցիների համար, ա-
ւելի մեծ դժուարութիւնների հետ է կապված:
Ստաւրոպոլի, ապրաստի, Նիստ ու կապի փոփո-
խութիւններ, աղքատութիւնը նկատման և բարո-
յական զրկանքը,—բոլորը այնպիսի հանգանակնե-
րն են, որոնք ուսանողին շատ անգամ մեծ նե-
ղութեան մէջ են դնում: Սակայն ուրախալի է,
ի հարկէ, որ այդ բոլորը չէ աղքատ երիտասար-
դութեան վրա, և նա սիրով դիմում է դէպի
բարձրագոյն դպրոցները: Գիմնազիստները, համա-
ձայն ուսումնարանի ծրագրին, պէտք է որ իրանց
ուսումը շարունակեն, նրանց առաջ բաց են հա-
մալսարանների բարձրագոյն դասերը և պարզ է, որ
այդ ընտրանքներից իւրաքանչիւրը աշխատում է
իրան տուած արտօնութիւնից ոգուտ քաղել: Բայց

լի հարուստ և լի ժողովածու Ֆրանսիայի բոլոր
նահանգների ազգաբնակչութեան մէջ թէ այժմ
գործածվող և թէ առաջ գործածված՝ մանկական
հագուստների, օրօրոցների, բարտրանքների, մա-
նուկների մասնաւոր սովորեցնելու միջոցների ա-
մեն տեսակ նմուշներ.... Մարդ չվարվում է
նոյն իսկ այդ մէջ հատ բաժինը նայելիս.... Ո՛ր-
քան աշխատանք, որքան խնամք, որքան ժամա-
նակ, որքան մանրակրկիտ ջանք էր հարկաւոր
այդ բոլորը ժողովելու համար:

Ապա մանում էք Վարմիր խաչի՝ ընկերու-
թեան Ֆրանսիական բաժինը: Այդտեղ մտնում
էք մի շարք դահլիճների մէջ, որտեղ կայ և խը-
նամոզ թղթերի գործատունը (այդտեղ կանայք
նստած գործում, կարում են), ապա մտնում էք
մի դահլիճ, որը օրինակելի շիւանդանոց է ներ-
կայացնում, այնուհետև հետեւեալ դահլիճներում
հանդէս են դրված վերաբուժական ամեն տեսակ
գործիքներ, մոմից, բնական մեծութեամբ շին-
ված մարմին, կապած ձեռքերի ու ոտների նը-
մուշներ, վերջապէս շինութեան առաջն ընկերի
վրա դրված է Վարմիր խաչի՝ ընկերութեան
երկաթուղային քաղաքատու գնացքը, տասի չափ
վազոններով, վերաբուժական և հիւանդների
համար ամեն տեսակ յարմարութիւններով:

Ինվալիդների հարթավայրի վերջում, աւելի
ժօտ դէպի ինվալիդների շինութիւնը, զուգ հան-
դիպում էք մի ամբողջ փոքրիկ քաղաքի: Դա
բաղկացած է բանւորական օրինակելի բնակա-
րաններից, օրինակելի աղքատանոցներից, օր-
նակելի մանկաբարձական տներից, օրինակելի
ժողովրդական խոհանոցներից, որոնցից մէկը
բանում է, պատրաստում է կերակուրներ, որպէս
զի այցելուներից ցանկացողները, ի հարկէ, յայտ-

քել չէ այն անհատների թիւը, որոնք ուրիշ ա-
սումնարաններում են աւարտել և կը ցանկային
բարձր ուսում ստանալ: Հարուստ գնում է ար-
տասանման, իսկ չունեւորին մնում է կամ յետ
մնալ իր ասպարիզից, կամ քսան և աւելի տարե-
կան հասակում լատիներէն և յունարէն սովորել
սկսել: Ինչքան մեզ յայտնի է, Ռուսաստանի ոչ
մի նահանգում այդպիսիների թիւը այնքան
մեծ չէ, ինչքան Օստը: Նահանգում, այնպէս
որ նրանց թիւը սովորաբար դիմնադիտանքից
էլ աւել է լինում: Կարծում ենք սխալված
չենք լինի, իթէ հետեւեալ յարաբերութիւնը վերց-
նենք,—15 գիմնազիստի վրա, 25 ոչ-գիմնա-
զիստ: Այդ հանդամանքին նպաստում է մասնա-
ւորապէս այն, որ այստեղ քննութիւնները տեղի են
ունենում տարեկան երկու անգամ, մայիսի վեր-
ջին և նոյեմբերի վերջին, այնպէս որ քննութիւն-
ների ժամանակ կտրվող միայն 6 ամիս է կորց-
նում և ոչ մի տարի, ինչպէս լինում է Ռուսաս-
տանում:

Ճիշդ չէն այն բոլոր լուրերը, իբր Դորպատի
համալսարանը ընկել, կամ թէ փոփոխութիւն-
ների է ենթարկվել: Նա դեռ փայլում է ինչպէս
միշտ, ամփոփելով իր պատերի մէջ դիտութեան
պատիւ բերող անձնաւորութիւններ:

Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսից ստացանք հետեւեալ տեղեկութիւնը.
Յունիսի 24-ին, ուրբաթ օր, ինչ մեքենան մի
աղերսագիր ներկայացրին Սուլթանին, աղաբա-
ղատութիւն խնդրելով Մուսա-պէյի դէմ: Աղեր-
սագիր առդնելու տարվեցին Սուլթանի պալատը,
որտեղ նրանց ընտելութեան ենթարկեցին: Փննու-
թիւնից յետոյ աղերսագիրը ստորագրողներին
յայտնում են, որ այդ խնդիրը դատական խնդիր
է, և պէտք է ուղարկել դատարանին դիմել, հարց-
նելով թէ ինչու նրանք փոխանակ դատարանին
դիմելու, Սուլթանին են դիմում: Աղերսագիր
ստորագրողները յայտնում են, որ իրանց Սուլ-
թանին են դիմում այն պատճառով, որ ինքը

նի, թէ և չնչին վճարով, կարողանային փորձել
կերակուրները:

Բանւորական օրինակելի բնակարանների վրա
արժէ դարձնել այցելուի ուշադրութիւնը:

Փոքրիկ, երկարակալի տներ, պարունակում
են իրանց մէջ կամ մի բանւորական բնակարան,
կամ երկու փոքրիկ բնակարաններ: Բնակարանի
ստորին յարկը բաղկացած է երկու սենեակից՝
մի ընդունարանից կամ ճաշարանից և մի խոհա-
նոցից, իսկ վերին յարկում գտնվում է բանւորա-
կան բնտանիքի համար ննջարան, կամ երկու փո-
քրիկ ննջարաններ: Տան առաջն գտնվում է փոքրիկ
և զեղեցիկ այգի: Ինքն բնակարանը շատ յարմար
և կոկիկ է և մէջը դրված կան-կարասիները հա-
սարակ և յարմար են: Կան-կարասիների, ամանե-
ղէնների, բնակարանի սարք ու կարգի մէջ ո-
չինչ բան, ոչինչ մանրամասնութիւն մոռացված
չէ: Այն ընկերութիւնը, որը հանդէս է դրել բան-
ւորական այդ կոկիկ և յարմար տները, յանձն է
առնում սարքել այդ տեսակ տները բանւորների
համար շատ է ժամանկեղծ իր կողմից ամեն
տեսակ գիւղութիւններ է անում բանւորին նրա
առած տան համար արժէքի վճարման ժամանա-
կամիջոցի վերաբերմամբ:

Նոյն ընկերութիւնը, կարծես, հանդէս է դրել
բանւորական տների կողքին և մի զեղեցիկ փո-
քրիկ տուն, որը կարելի է ծաղիկ, դարսիկ, ուղար-
կել ուր և կամենալ և այնտեղ նորից սարքել:
Այդ տունը շատ յարմար է ամառանոցի մէջ մի
բնակարանի համար: Այդտեղ սարք ու կարգը
արդէն չեղ է և բնակարանը բաղկացած է մի
քանի զեղեցիկ սենեակներից ստորին յարկում և
մի քանի սենեակներից էլ երկրորդ յարկում: Ա-
մառանոցի այդ փոքրիկ տունը արժէ ընդամենը

Մուսապէյ Սուլթանին է դիմել: Այդ պատասխանը գտնացուցի է համարվել, որից յետոյ ազդեցողութեամբ տնտեսական հետազոտութեան հետախուզում են պատահել:

Աշխատանքները իր փութով Վարդանան այս օրերս իր թարգմանութեամբ հրատարակեց երկու նոր գրքեր, այն է իտալացի գրող Էդմոնդո Դե-Ամիչիի «Սիրտ» անունով բաւական տարածված աշխատութիւնը, և նոյն հեղինակի «Ապէնիններէն» մինչև Անդերը գրքովը: Երկու գրքերն էլ յատկապէս պատահական ընթերցանութեան համար են: «Սիրտ» գրքը դրված է աշակերտական յիշատակարանի ձևով: Այդ պարզ և հասարակ կերպով գրված գրքի մէջ, որի նիւթը դպրոցական շրջանակից համարեալ թէ դուրս չէ գալիս, հեղինակը շնորհիւ է շատ տեսակ դպրոցական և հասարակական հարցեր, սովորութիւններ, հասկացողութիւններ, և հասարակական հիմնարկութիւններ: Գրքի մէջ կան շատ գեղեցիկ և յափշտակող նկարագրութիւններ, և աշակերտական պատանեկան կեանքից վերցրած այնպիսի «ճիշդ գծեր, որ ընթերցողի վրա թողնում են շատ մեծ տպաւորութիւն, չը նայած որ հեղինակը իր աշխատութեան մէջ, իրան յատուկ սովորութեամբ, միշտ խոյս է տալիս մեծ-մեծ բառերից, լոկ հետաքրքրութիւն չարժող արկածներ նկարագրելուց: «Սիրտ» գրքը շատ տարածված է ոչ թէ միայն իտալալուս, ուր նրան մանուկ խաղաղու սեղանի դարձ անունն են տալիս, այլ և նա թարգմանված լինելով եւրոպական շատ լեզուներով, դարձել է ամեն տեղ մանկական և պատանեկան ընթերցանութեան համար շատ օգտուէտ գիրք: Այդ պատճառով նրա հայերէն թարգմանութիւնը շատ ցանկալի էր: Պ. Վարդանան այդ գրքերը թարգմանել է իրան յատուկ սահուն և կենդանի լեզուով, թէև ցանկալի էր, որ յատկապէս այս գրքերում, իբրև պատանիների ընթերցանութեան վերապահված գրքերում, լեզուն աւելի պարզ, աւելի հասարակ, և մի քանի տառնակ անգործածական-բառերից զուրկ լինէր: Ինչ կասկած, որ այդ գրքերը մեր դպրոցները աշակերտական գրադարանների սեփականութիւն կը դառնան: Աւելորդ չենք համարում նկատել, որ Էդմոնդո Դե-Ամիչիի այդ «Սիրտ» անունով գրքի հայերէն թարգմանութիւնը տպագրվում է և վենետիկի «Բազմալէպ» հանդիսի մէջ: 336 երեսից բաղկացած «Սիրտ» գրքի գինն է 1 րուբլի, իսկ «Ապենիններէն» մինչև Անդերը գրքովը, որ բաղկացած է 47 երեսից, 20 կոպէկ:

Ռուս գրող Չերնիշովսկի, ինչպէս երևում է

91500 Փրանկ, իր մէջը պարունակող գեղեցիկ և յարմար սարք ու կարգի և կան-կարտիների հետ միասին: Նշանակված տեղում տունը նորից սարքելու համար էլ ընկերութիւնը պահանջում է, բացի տան գնից, դարձեալ 700 Փրանկ վճարել:

Ինվալիդների հարթավայրի վերջում գտնվում է մի մեծ շէնք: Ուր Պարիզի «Պանթիստ» է: Դուք բարձրանում էք սանդուղտներով, միտնում էք մի լայն, բայց մոլոր կօրիզորի մէջ, որը թատրոնական կօրիզորների պէս՝ ցերեկով էլ լամպաներով է լուսաւորվում և վերջապէս մըտնում էք մի ահագին բոլորակ զանդիւն, որը առաստաղից է միայն ստանում իր լոյսը: Դուք կանգնում էք մի բարձր պլատֆորմի վրա և ձեր չորս կողմը բացված է մի հրաշալի տեսարան՝ դուք տեսնում էք ձեր առջև ամբողջ Պարիզ քաղաքը, իսկ պլատֆորմը շրջապատող մեծ հրապարակները և մօտակայ բուլվարների վրա, գրեթէ բնական մեծութեամբ ներկայացրած փողոցներով անցողաբնակից մէջ՝ դուք ճանաչում էք Պարիզի գլխավոր խառնուրդը: Դուք տեսնում էք Պարիզի ժամանակակից ամենանշանաւոր մարդկանց և Ֆրանսիայի մայրաքաղաքը եկած նշանաւոր հիւրերին:

Սոյնամանակ կայ «Պանթիստ» կայ և ցուցահանդիսի միւս բաժնում, այն է Մարսիան գաշտի սկզբում: Դա «Անդրադանտեան ընկերութեան» պանթիստ է: Այդտեղ սանդուղտներով բարձրանալով դանդիւն, դուք յանկարծ գտնվում էք մի ահագին շոգենակի վրա և ձեր վարմացած աչքերին բացվում է ձեր չորս կողմը Ատլանտիան լայնատարած ուղիները: Ձեր նաւը գտնվում է Հավրի նաւահանգստում և նաւի շուրջը դուք տեսնում էք բազմաթիւ ուրիշ շոգենակներ ու նաւեր... Տպաւորութիւնը կատարելապէս խառնուրդ է

ուսաց լրագրողների հաղորդած տեղեկութիւններից, նրան տուած իրաւունքի համեմատ, Աստ-րախանից տեղափոխվում է Մարաթով՝ մշտական բնակութեան համար:

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի քաղաքային վարչութեան կողմից նշանակված մի քանի անձինք՝ ոստիկանական պաշտօնեաների հետ միասին երբեմն երբեմն պտուտում են խանութները՝ և քննում զանազան ուտելիքները: Եթէ նկատում են, որ այս կամ այն մթերքը կամ միջոցը փախած է, իսկոյն ոչնչացնել են տալիս: Անկասկած դա մի լաւ միջոց է ժողովուրդի ազատեցում հոտած երշիկներից, փչացած ձկներից և փթած մրգերից, որոնք այնքան շատ են շուկայում: Տարաբաղա-բար այդ միջոցը շատ անգամ իր նպատակին չէ հասնում. շատ է պատահում, որ զանազան մրդալուծաւորներ և խանութպաններ մի քանի ձեռն հասնում են իրանց օգնութեամբ կարողա-նում են անարգել վաճառել այդ բոլոր ան-պէտք մթերքները, որոնք պէտք է անպայման դէն գցվէին: Հարկաւոր է աւելի զգուշ լինել և աւելի լաւ հսկել:

Յուլիսի 4-ին Թիֆլիսի ժողովարանի ամսալսի-այցին լի էր բազմաթիւ բազմութեամբ, սկը-նած երգուհալ թղթախաղներից, Կախէթի գի-նու սիրահաններից, և պարելու համար սերտը-տրոփող ջահիլ օրօրողներից և պատանի կապիւ-րներից: Ինչպէս մի օտար արդէն գերեզմանում դրած պառաւ կէկէները ու Մաթթիները, որոնք նստած գեղեցիկ պարտիզի նստարանների վրա, անկա-կած, կամ իրանց ջահիլութիւնն էին յիշում, և կամ,—հետեւելով նախահայրերի սովորութեան,— բաժնաւոր էին... Այդ օրը այդպիսի ահագին բազմութիւն գէպի ամսալսին կլուս տանողը մատամբ այն սարսափելի շոքն է, որ ամենքին Թիֆլիսի կեղտոտ փողոցներից քշում է գէպի այցիները, և մասամբ էլ այն, որ այդ օրը կլուգի վարչութիւնը ձրի կօնցէրա էր կազմել կլուրի յաճախորդների համար: Ինչ կասկած, որ կլուրը այդպիսի կօնցէրաներ կամ թատրոնական ներ-կայացումներ կազմելով գէթ չաբաթը մի ան-գամ կապտի իր յաճախորդներին յօրանջուց, և մի փոքր կատարելութեան միջոց կը տայ:

Կ. Պոլսից մեզ գրում են յուլիսի 27-ից հետե-ւեալը. «Պ. Շահամեան տակաւին Պոլսի է, հաւա-նորէն պիտի մեկնի մի քանի օրէն: Պ. Շահա-մեան յետաձգեց իր ուղևորութիւնը որպէս զի օգնէ աղքատիկ եկեղեցիի մը: Կիրակի օրը յու-նիսի 25-ին Ս. Լուսաւորչի տօնին առթիւ Մե-լիսից էլ կպիտակուի պատարագից Ս. Լուսաւոր-չի... Ով որ ճանաչում է ծովը, ով որ ծովով ճա-նապարհորդել է՝ կարծում է որ ճամբիտ ծովի մէջ տեղ, շոգենակի վրիկի մասում է գտնվում, և ահա շոգենակը իմպի կը չարժի, կը լոյսը դէպի հեռաւոր երկիրը: Մարաթ. բնական մեծու-թեամբ մօտից շինված մարդիկ, շոգենակի կապի-տանը, ծառայողներն ու ծառաները, նաւի երկու ծայրերում կանգնած՝ կատարելապէս լրացնում են իլլիւլիան...»

Նաւի վերին մասից դուք կարող էք իջնել ներքև և նայել գեղեցիկ կերպով սարքած շքեղ կախուքները: Նաւը, որի վրա դուք գտնվում էք, ընդօրինակված է Անդրադանտեան ընկերու-թեան շոգենակներից, այն ահագին և շքեղ շոգե-նակներից, որոնք երթեկեւում են Եւրոպայից Ա-մերիկա: «Պանթիստ» ստորին յարկում ձեզ ջրայ է տրվում մի «Կիրաւան»: Այդտեղ ձեր աչ-քերին հետզհետեւ երևում են հետեւալ տեսարան-ները: Հավրի, Մարսիլի և Ալժիրի տեսարանները, Նիւ-Եորիի նաւահանգստի տեսարանը, Անդրատ-լանտեան շոգենակների շքեղ սալօնի և ճաշարանի տեսարանը, շոգենակի երրորդ կլուսի ներքը, շո-գենակի հնոցների տեսարանը, ապա ահագին նա-ւահանգիստը Ամերիկայում, որտեղ նոր շոգենա-կեր են կառուցվում, և այլն:

Ինվալիդների հարթավայրից անցնելը «Quai d'Orsay» գետեզրը, որտեղ նմանապէս գտնվում է ցուցահանդիսի շարունակութիւնը: Այստեղ մեր ուղևորութիւնը դրաւում են գլխաւորապէս երկրագործութեան, զինեղործութեան և այլեւ-զորութեան Ֆրանսիական վերին աստիճանի հարուստ և ընդարձակ բաժինները, և նմանապէս ամեն երկրների սնունդի առարկաների ընդար-ձակ բաժինները: Այդ բաժիններում էլ Ֆրան-սիան գերազանցում է բոլոր մնացած բաժիննե-

րի նուիրումը-փոքրիկ եկեղեցւոյն մէջ. այդ ե-կեղեցւոյն շինուած է Գընալը կղզիի վրայ: Մար-մարայի չորս կղզիներուն էն փոքր կղզին է. բայց հիանալի օդ և տեսարան ունի. այդ կղզին հայոց կղզի կրնայ համարուիլ, չորս կղզիներէն մի-այն այդ է որ հայոց եկեղեցի ունի. միւս կղզիներն յունական են: Շահամեանցէ խնդրեցին կը-ղեցնեն երգել Ս. Լուսաւորչի տօնին. այդ լուրն հրատարակուելով «Արեւիքի» մէջ կիրակի օրը խուռն ըզմութիւն գիմեց Գընալը-կղզին. մասնաւոր շոգենակ մը միւս կղզիներու հայերն անդ կը բերէր: Եկեղեցւոյ նպաստը լաւ եղաւ. մօտաւորապէս 350 րուբլի, գումար մը դուր ե-րէք եկեղեցին միանգամայն չէր տեսած. եկեղե-ցւոյն տարեկան ամբողջ եկամուտն այդքան չըլարւր:

Յուլիսի 2-ից մեզ գրում են ԲԱԳՈՒՅ. «Այս-տեղ երեւոյ ժողովուրդը շրջակայ գիւղերն էլ լցվել են այդ ահեղի թշնամիներից: Ասում են, որ հիւսիսային սաստիկ քաղաքներն են Աստրախանից քնել բերել դրանց այստեղ: Երբեք եկողներն էլ են մի և նոյնը հաստատում»:

Մի նոր միտք է յղացել Բագուի երիտասար-դութեան մէջ.—այն է հիմնել «Չը ծխողների ըն-կերութիւն»: Ինչպէս մեզ գրում են Բագուից, արդէն շատերը աշխատում են արծարծել հասա-րակութեան մէջ ծխելու վնասակարութեան միտ-քը, որպէս զի հոգ պատրաստեն մի այդպիսի ընկերութեան գոյութեան համար: Այն դա ժա-մանակաւոր. լուսնական ցանկութեան արգասիք չէ,—կարելի է աշողութիւն ցանկանալ նախա-ձեռնողներին:

«Արարատ» ամսագիրը՝ հայոց ազգին ուրախու-թեան աւետելով, «ուրախացաւ միաբանութիւնին»՝ «ուրախացաւ ժողովուրդին» և «ուրախ է սուրբ եկեղեցին» սողողով հաղորդում է հետեւեալը. «Յուլիսի 17-ին առաւօտեան սարկաւազութեան աստիճան ստացան ճեմարանի տեսուչ պ. Արշակ Նահապետեան և ճեմարանի ուսումնաւարտ սա-ները՝ պ. պ. Կարապետ Տէր-Միքայէլեան և Գեորգ Չօրէքեան ու երրորդ լսարանի ուսանող Գա-րեգի՝ Յովսէփեանը: Նոյն օրը երեկոյան սար-կաւազ Արշակ Նահապետեանը վարդապետու-թեան կոչումն ստացաւ և առաջիկայ օրը 18-ին արժանացաւ քահանայութեան աստիճանին տէր-Նահապետ անուամբ, իսկ երեկոյան ստացաւ կրօնաւորութեան վեղարը»:

Դուբայի գաւառի Նոր-Խաչմազ գիւղից մեզ գրում են. «Յուլիսի 15-ին գիւղի նոր կալուա-

րից, թէև ամբիկական, աւտարակական, բեղիւ-կան, շիջարակական և աւտար-ուղարակական բա-ժիններն էլ վատ էն: Ռուսաց բաժինը փոքր է և աղքատ. չաքար, այլ և այլ օղիներ, պանիր, սառնիկներ, կովկասեան (Մուկրանիկո) գինինե-րի մի քանի շիշեր, մոմեր, նաւթ, նաւթաւորներ և նաւթի միացորդներ, և վերջապէս Բաթումի Բօտլիլեան նաւթապահեստի մի մեծ մօղէլը,— այդ է գրեթէ բոլորը, ինչ որ կարելի է տեսնել մոնդի նիւթերի ուսուց ըստում: Պէտք է ա-ւելացնել որ մոնդի նիւթերի և մոնդի առաւ-րականի ցուցահանդիսի բաժնի մէջ մոնդում են, առհասարակ, և հնոցները, վաւարանների այլ և այլ տեսակները, նմանապէս և զանազան վառե-լանիլների նմանները:

Ինչպէս ասեցի այդ բաժնի մէջ Ֆրանսիական մասը ամենահարուստն է: Ինչ ասեա կայ այդ-տեղ. չաքարեղէն այլ և այլ արդիւնքների, ա-մենահարուստ արդիւնքներից սկսած մինչև ա-մենանաւթ կօնֆէտներ, հացահատիկների տեսակ-ներ, վերմիշի և մակարոններ, զանազան տե-սակի պանիրներ, ամեն տեսակ Ֆրանսիական գինիներ, խոզի միս այլ և այլ արդիւնքներ, այլ և այլ թռչուններ, ալիւր, թխած հաց, ձկնեղէն-ներ, խմորեղէն արդիւնքներ, որոնցից մի քանիս-ները թխվում են նոյն իսկ այցիլուր աչքի առջև և նրան անմիջապէս առաջարկվում են, Ֆիրմա-ները ահագին մօղէլներ, կաթնեղէն արդիւնքներ, կովերի տեսակների նկարներով և ահագին մօ-ղէլներով, հաւաքուներ, ամեն տեսակ ձուաներ, արուստարկուական կերպով (առանց թխվու-նոտող հաւի) դուրս բերած կենդանի լազմաթիւ հաւի ձուտեր, նոյն իսկ լօրի ձուտեր... և այլն: Մեզ ցոյց տուցին այն հնոցները, որտեղ դըր-վում են ձուտներ, որոնք մի յայտնի ժամանակ

ժամէր բոլիկ Միքայէլ Չալիանցի և մի խումբ գիւղականների ներկայութեամբ, դպրոցի շի-նութեան մէջ գիւղականների առաջ կարգացվեց ուսուց և հայոց լեզուով պատրաստված գիւ-ղական շատեմարանի մանրամասն ծրագիրը, որը բաղկացած էր տասն յօդուաներից: Այդ ծրագիրը ուրախութեամբ ընդունվեցաւ հասարա-կութեան կողմից, և արձանագրվեց Գիւղական դատաստանական ժապարհնալ մատենադաս-Այդպիսով շտեմարանը, որ մի նորութիւն է այս կողմի գիւղերում, այս տարվանից արդէն կը սկսի իր գործունէութիւնը մեր՝ յետեկած, թուր-քերով շրջապատված և թրքախօս գիւղում: Գա-անապայման ուրախալի է: Մտադրութիւն՝ կայ ու-սումնարանը նմանապէս աշխարհ վերանորոգել և աւելի ևս կանոնաւորել՝ երկրորդ դաստիարակ, և օրիորդական բաժանմունք բանալով:

ՄԵՐ-ՂԱՐԱՔԻՍԱՅԻՑ մեզ գրում են. «Յուլի-սի 27-ին հայտարար դատարանում ընկնում էր մեր մի ուսուցչի անպատուութեան և դանակ-ծովեան գործը, որի մասին պիտի լինէր «Մշակի» № 8-ում: Չը նայելով հացկատակ վկանների մի-մեանց հակասող ցուցմունքներին, հայտարար դատարանը հիմնվելով մի քանի վկանների բարե-խիղճ ցուցման վրա, յանցաւոր վ. Նըշտետե-նին, որ մեղադրվում էր այդ գործում, դատա-պարտեց երկու ամիս բանտարկութեան և 111 ր. 50 կ. տուգանքի յափշտակած իրերի համար: Գործը տեղեց անընդհատ 6 ժամ. բազմաթիւ հան-գիստականների վրա շատ լաւ տպաւորութիւն թո-ղեց այդ վճիռը»:

ԲԱՆԱՆՑ գիւղից մեզ գրում են. «Այս տարի անդադար տեղացող անձրևները սովորականին հակառակ լաւ հետեւեցներ ունեցան. առաւ-հունձ է սպասվում թէ Բանանցի և թէ արա շրջակայ գիւղերի հանդերձ: Սեանի կողմերից այստեղ եկողները նոյնպէս լաւ յոյսեր ունեն. իսկ Գանձակի շրջակայքում այս տարվայ հունձը սպասածից աւելի աշուղ էր»:

Մեր լրագրի № 72-ի մէջ տպագրելուք այն ա-ղբիւսագիրը, որ Մուշի կողմերում յայտնի Մուսա-պէյ աւազակապետը, Պոլսի կանչված լինելով, ներ-կայացրել է թիւրքաց Սուլթանին: Այդ աղբիւսագրով Մուսապէյ յայտնում է, որ ինքը օսմանեան պետութեան հաւատարմ զաղաքացի է, բողո-քում է իր դէմ զանգաւորների դէմ, իր դէմ եղած զանգաւորները համարում է զրպարտու-թիւն և խնդրում է օսմանեան զահակալից դատ նշանակել և արդարութիւնը հրապարակ դուրս բերել: Սուլթանը, ինչպէս հաղորդում են Կ. Պոլ-

հաւասար կերպով տաքանալով, առանց հաւի օգնութեան դուրս են բերում կենդանի փղերիկ թռչուններ... Մեր աչքի առջև, հնոցի վերին մասում յարմարեցրած հաստ ապակու տակ, ձը-ւից փոքր առ փոքր դուրս էին գալիս հաւի ձու-տեր...

Բայց բաւական է այսօրվայ համար թող տուե-ցէք այս թղթակցութիւնս վերջանեմ, շատ ուշ է արդէն և ես սաստիկ յօգնած եմ ամբողջ օրը ման-գալուց ու դուրս էլ սաստիկ խառն է օրվայ ընթացքում ստացած բազմաթիւ տպաւորու-թիւններից: Բաւական չէ որ այցելում եմ ցու-ցահանդէսը, բայց անընդհատաբար նոր նոր անձ-նաւորութիւններին հետ եմ ծանօթանում, որոնց կամ ինքս եմ այցելում, կամ նրանք իրանք են ինձ ժող գալիս: Դրանովս Գարիբալի մի քանի հայերի հետ էլ, ի միջի այլոց և բազմաթիւ հայ ուսանողների հետ:

Եւ մինչդեռ շարունակվում է ցուցահանդէսը, շարունակվում են և բազմաթիւ կօղբեղաների նիտերը... Խաղաղութեան կօղբեղ, կանանց ի-րաւունքների կօղբեղ, բանտարկան կօղբեղ, հացթուղիների կօղբեղ, և այլն և այլն... Հնար չը կայ ամեն տեղ գնալ, ամեն բան այցելել, ամեն տեղ ներկայ գտնվել, ամեն բան մաս-նակցել, մանաւանդ որ տարածութիւնները Պա-րիզում աներկակալելի մեծ են, ահագին են, իսկ այդ բազմաթիւ կօղբեղաների նիտերը կենտրո-նացած չեն բազմաթիւ տեղում, այլ տեղի են ունենում Պարիզի ամեն ծայրերում...

Տասն և հինգ օր է միայն որ Պարիզում եմ, և խոստովանում եմ՝ սկսում են արդէն յոգնել այդ տեղային կեանքից... Բայց դարձեալ ինչ-քան բան կայ դեռ ես տեսնելու...

Գրիգոր Արմուշի

սի լրագրողները, հրամայել է օրինաւոր դատ ըս-
կան, կանչել վկաներ, գործը օրինական կերպով
քննել, և իմանալ թէ, արդե՞ր Կոստանդնուպոլսի
հրաժեշտ թուրքական զորքի հետ թէ, ոչ ոք ինչ-
պէս երևում է կ, Պոլսից եկած տեղեկութիւննե-
րից, Կոստանդնուպոլսի մեծ յոյս ունի գործը տանելու,
որովհետեւ նա համոզված է, որ մուսուլմանները և
առհասարակ գիւղացիները կրկնապէս կը լռեն, և
կը վախենան հրապարակ դուրս գալ և դատ վա-
րել Կոստանդնուպոլսի դէմ Կոստանդնուպոլսի
պաշտպանները բաւական հիմնաւոր են, որովհետեւ
Մուշի կողմի գիւղացիների աչքը, ինչպէս ասում
են, այնքան վախեցած է, և նրանց աչքը առաջ
այնքան կենդանի են Կոստանդնուպոլսի մեծ
պաշտպանները, որ զօրաւոր թէ, նրանք առանց պաշ-
տպանի և աջակցի կարող լինեն իրանց բո-
ղոքը առաջ տանել և իրանց դատը պաշտպանել
Արդ, ով պէտք է լինի այդ պաշտպանը և աջա-
կիցը.— անկասկած կ, Պոլսի հայոց պատրիար-
քարան, իրեն թիւրքահայերի օրինական ներկա-
յացուցիչը, մանաւանդ որ ինքն սուլթանը հրա-
մայել է օրինական դատ սկսել և գործը ամս-
նայն մանրամասնութեամբ քննել:

Կ. Պոլսի «Արևիկ» լրագրի յունիսի 17-ի հա-
մարում տարագրված մի յօդուածում անկախներ
զեցելով ուսումնասիրող զրաւական-հասարակական կեան-
քի վրա, յօդուածագիրը կանգ է առնում թիւթիլ-
սի հայոց Հրատարակչական ընկերութեան վը-
րա, և խոսելով նրա մեծածախ առեւտրի և նրա
վերջին ընդհանուր ժողովների մասին, և այն
միտքը յայտնելով, որ ընկերութիւնը պէտք է հը-
րատարակի ժողովրդի համար պիտանի և հա-
կանաւոր գրութեան, հետեւեալ տողերն է գրում
ընկերութեան նկատմամբ միջոցները մեծացնելու
վերաբերմամբ. «Այժմ կը մնայ զլիարար խնդիրն
թէ ինչ տեղէն պիտի հոգայ ընկերութիւնն իւր
ծախքը: Թէև ցաւալի է ասել և մինչև անգամ
ամօթալի Տիգրիսի հասարակութեան համար. բայց
զմարդաբար ապացուցուած է որ ոչ մի ընկե-
րութիւն հաստատ հիմ չի կարողանար դնել այն-
տեղ և հայի ընդհանուր սովորութեան համեմատ
գործին սկստած ժամանակ հաւանք և ապա ան-
հոգութիւն ու անգործութիւն կը տիրէ: Եթէ «Ար-
ևիկ» անդհադատ և խիստ պարկուրմունքը չը լի-
նէին, հաւանականաբար այս 9 տարեկ ի վեր
զայտնութիւն ունեցող հրատարակչական ընկերու-
թիւնը դեռ ևս չարունակէր գոցէ ընել իր 13
անդամներով, կամ գէթ այսպէս է մեր լսած
կարծիքը շատերէ: Եւ թէպէտ վերև նկարագրած
յուզման շնորհիւ նրանց թիւը բարձրացած է ար-
դեն 150-ի, բայց միայն անգամաձայնի յոյսով
գործ կատարելու ջանքին անշուշտ երկխոսու-
թիւն է: Աստի ուրիշ աղբիւրներ հարկաւոր է
սկստել: Այս աղբիւրներէն զլիարարը պէտք
է որ լինի բնականաբար գրեթե փառաբա-
նական գոյացած արդիւնքը. սակայն այդ ևս բա-
ւական չէ անշուշտ ըստ կարի ընդարձակ ծրա-
գիր մը իրագործելու, ուստի ընկերութիւնը կաշ-
խատի կողմնակի օգուտներով իր հասոյթներու
վրայ յաւելում ունենալ: Այս վերջին միջոցներէն
յառաջապէս մէկը վրայ մնալ կողմնակի չեղտել
այս անգամ: Մեր կարծեօք, ընկերութիւնը պէտք
է նաև կենդանի խօսքով դէպ ինքը ձգել համա-
րակութեան ունի և ձգտել իր նպատակի յաջո-
ղացմանը: Նա պարտաւոր է որքան կարելի է
շուտ շուտ դասախօսութիւններ և գրական երե-
կոներ կազմէ, որոնք գրական ընկերութեան մը
համար ամենապատշաճաւոր գործեր են: Միւս
կողմէն ամէն ոք կը խոստովանի, որ նրապա-
րակական ուսումը, կենդանի խօսքը միւս առաւ-
ձին, երկարատև տպագրութիւն մը կը թողու-
նակնդիրներու վրայ: Ընկերութեան անդամներու
մէջ պակաս չեն այնպիսի հոգեւոր անձինք, որոնք
յաջողութեամբ կարող կը լինեն կատարել այս
գործն եթէ փոքր ինչ զոհողութիւն կամենային
անել իրենց ժամանակի յօգուտ ընդհանրութեան:
Եւ այս միջոցն ամենկին հակառակ չէ ընկերու-
թեան դիմանալ, քանի որ այդ դասախօսութիւն-
ներն և երկրորդներն ստացած արդիւնքը պիտի
գործածուի միևնույն նպատակին և մանաւանդ որ
այն դասախօսութիւնները պէտք է նաև անուս-
ձին զընդհանրով տպուին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՆԻՑ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՆՈՐ ՀԵՌԱԳԻՐ

«Մշակ» անցնալ համարներից մէկում տպա-

գրեցինք այն հետադրի պատճէնը, որ Վանի հա-
յերու ուղարկել են կ, Պոլսի, Սուլթանի անունով:
Այժմ կ, Պոլսի թուրք և հայ լրագրողները հրա-
տարակել են մի նոր հեռագիր, որ Վանի մի
խումբ հայեր ուղարկել են թիւրքաց մեծ-նպար-
քախն: Ահա այդ հեռագիրը բառ առ բառ:
«Ընդ հովանեալ Վն. Սուլթանին, հայ ծա-
ռայքս կատարեալ հանդարտութիւն և բարորո-
թիւն կը վայելնէր: Այս ճշմարտութեան հակա-
ռակ անհանկուտի դիտումներ կը տածեն մեր
Ազգէն երեք չորս անձինք, որք թողլով Առաջ-
նորդարանին՝ Կոստանդնուպոլսի ֆարաքս-
վոց մէջ իրենց որոշեալ և սահմանեալ պայտօնն,
որ է ամուսնական գործեր տնօրինել, դպրոցնե-
րուն վրայ հոկել, և եկեղեցիներն և բարեպաշ-
տական ստացուածքները խնամել, իրեն Ազգին
ներկայացուցիչ՝ կը միջամտեն Տէրութեան բազա-
քական գործերուն, որոյ արդարաւորութեան հա-
մար այնչափ երախտապարտ ենք, և իրենց այս
ընկերացիով, զվեզ՝ հայ ծառայքս՝ կայսերական
զեմլեկներն և բարենաճութեան զբոսանքի վտանգի
մէջ կը գնեն: Իրաց այս վիճակն արդէն յայտ-
նած ենք Հայոց Պատրիարքարանին, և ճշմար-
տութիւնը բացայայտած ենք նաև առ Օգոստոս-
փառ Վն հայեան մատուցեալ մեր աղբիւրագրով:
Հաւատարմ չայ ծառայքս նայն զգացմանց մէջ
հաստատ կը մնանք, և այս առթիւ ևս կը փու-
թանք յայտարարել մեր երախտագիտական և
հաւատարմական դրացարանները»

Ստորագրած են՝ Ալօմարքան, Գալիզեան,
Գալիզեան, Գալիզեան, Տէր-Արքան, Գա-
պուրեան, Ալօմարքան, Սապուհեան, Ալեմեան,
Գեորգ Սալիմեան, Փարսամեան Գեորգ, Փիլիպ-
թեան, Քէլլը օղլու Գրեգոր, Պաղտատար օղլու
Մանուկ և այլն, և այլն և այլն:

ԱՆԿԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՐ

Յունիսի 22-ին անգլիական համայնքների ժո-
ղովում քննութեան ենթարկվեց մի հետաքրքրա-
կան խնդիր, որը դրաւել էր թէ մեծ քանակու-
թիւն պատգամաւորների և թէ կողմնակի հապա-
րակութիւն Այդ ժողովում պէտք է կարգադրէր
անգլիական թագուհու մի հաղորդագրութիւնը,
որը վերաբերում էր թագաւորական տան ան-
դամներին գանձարանից օժիտ նշանակելու հար-
ցին: Խնդիրը կարեւոր էր և այդ պատճառով դրա-
ւել էր շատերին դէպի ժողով: Ներկայ էր ինքը
Գլխաւորն, ներկայ էին նախ իսկ նախկին մի-
նիստերներից շատերը, քաղաքական ուրիշ նշանա-
ւոր գործիչներ, իրաւագիտական շատ պատգամա-
ւորներ, Պարնելի հետ միասին, և տնային ունեւ-
ղի բազմութիւն: Նիստը բանալուց յետոյ Սիմոն
առաջարկեց մի մասնաժողով ընտրել Գլխաւորն
հաղորդագրութիւնը քննելու համար, որը, ինչ-
պէս ինչեղիքը, վերաբերում էր թագաւորական
տան անդամներին օժիտ նշանակելու խնդրին:
Սիմոն առաջարկեց դրա հետ միասին, որ մաս-
նաժողովի վրա պարտաւորութիւն դրվի ներկա-
յացնելու մի զեկուցում և այն պիւրնի պիւրն իր
մասին, որոնցով պէտք է զեկուցարկել ապագայում
այդ հարցի վերաբերմամբ թագուհու հաղորդա-
գրութիւնը կարգաւոր, բոլոր ներկայ եղողները
բացի մի քանի իրաւագիտական պատգամաւորներից,
իրանց զլիարարները վերջինս Հաղորդագրութեան
ընկերացումից յետոյ Սիմոն յոյս յայտնեց, որ ժո-
ղովը կընդունի իր առաջարկութիւնը: Այդ հար-
ցի առթիւով խօսեց Գլխաւորն, յոյս յայտնելով
որ ժողովը կընդունի վերոյիշեալ առաջարկը:
Ժողովը ընդհանրապէս տրամադրված էր համա-
ձայնութիւն տալու, բայց մի քանի բուռն ճա-
ռախօսութիւններ առաջ բերեցին այդ ժողովում
մեծ յուզումներ: Հարուշէր մի երկար ճառ խօ-
սեց, և խիստ կերպով յարձակվեց գանձարանից
թագաւորական տան անդամներին օժիտ տալու
սկզբունքի վրա. դրա հետ միասին նա յայտնեց,
որ մասնաժողով կազմելու առաջարկութիւն ա-
նելով, կատարելութիւնը ուղղում է ամբողջ պա-
տասխանաւորութիւնը գցել ժողովի վրա: «Ժողո-
վը պէտք է իմանայ, ասեց հետեւը, չունի ար-
դե՞ր թագուհին այնքան միջոցներ, որ կարողա-
նայ լիութիւն տալ իր ընտանիքի պահանջներին:
Ընտանիքի մէջ պէտք է տիրէ այն դադարաւոր,
որ ծնողները պարտաւոր են հոգալ իրանց դա-
ւաններին մասին, և միանգամայն բաւական է
այդ նպատակի համար այն դրամաւը, 200,000
ֆունտ ստերլինգ, որ իւրաքանչիւր տարի գան-
ձարանը տալիս է թագաւորական ընտանիքին,
բացի թագուհուն տրվող յատուկ գումարից»:

Պատգամաւորներից մի ուրիշը՝ այն է Բրէդլի, ա-
ւելի խիստ կերպով խօսեց, աւելի հեռու գնաց,
և առաջարկեց վերաքննութեան ենթարկել թա-
գաւորական տան անդամներին տրվող գումար-
ների հարցը: Սակայն արմատական-դիմագրական
կուսակցութիւնը, վերջ ի վերջոյ, չը նայած այդ
խիստ յարձակումներին, համաձայնութիւն
տուեց իր կողմից ընդունելու Սիմոնի առաջար-
կութիւնը, և ժողովը ընդունեց Բրէդլիի առա-
ջարկութեան դէմ էին, ի միջի այլոց, Գլխաւորն
և Զ. Մորլէյ Տրիվլըյը, Չեմբերլէյն, և մի քանի
պատասխան պատգամաւորներ կատարելութեան
հակառակ ձայն տուեցին:

ՏԵԼԵԿՐԱԳՐԱԿԱՆ ԹԻՒՐԿԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Կ. Պոլսի լրագրողներում կարգում ենք. «Երես-
փոխան Նազարեանի առաւարակին ուսումնասիրե-
լու և առ Ազգ. Ժողովն տեղեկագրելու պաշտոն
ունեցող Յանձնաժողովը գումարեցաւ Ղալաթիոյ
խորհրդարանին մէջ: Յանձնաժողովը անդամնե-
րէն ներկայ էին Գալիզեան եպիսկոպոս Սրբան-
ձեանց, Յովհ. վարդ. Արշարունի և Մարկոս Ա-
ղաբէգեան, իսկ բացակայ էր Ստեփան փաշա
Աղանեան: Յանձնաժողովը խորհրդածութեանց
արդիւնքն այն եղաւ թէ՛ ըստ որում Նազարեան
էֆէնտիի առաջարկն իմէ ընդունուի, իսկ Պոլսոյ
եկեղեցիներուն համար չը պիտի գործադրուի այլ
նաև Թուրքիոյ բոլոր հայ եկեղեցիներուն, հետե-
ւաբար պէտք է նախապէս կարծիքն առնուի
Կիլիկիոյ և Աղթամարայ կաթողիկոսութեանց,
երուսաղէմի վանուց, ինչպէս նաև միւս բոլոր
վանքերուն և եկեղեցիներուն: Յանձնաժողովը
նայն խնամով տեղեկագիր մը պատրաստեց Ազգ.
Ժողովոյ ներկայացնելու համար, և իւր պաշտօն
աւարտած համարեց»:

Այնթապից մայիսի 18-ից գրում են «Արևիկ»
լրագիրն հետեւեալը. «Որումն հետաքրքրական
խնդիրն է Մորմոնականութիւնն, որ զմեզ կը
տանի բնազանցական վիճաբանութեանց հին դա-
բերուն: Քաղաքիս լուրջ և հմտալից անձնաւորու-
թիւնը մանաւանդ բողոքական ազգայիններէ,
տեսակ մը նախանշաններով համար ոգևորեալ կը
ճակատին Նոր Աշխարհի այս կոնքին, կամ լաւ
ես, աղանդին դէմ Հապիւ չունջ առած Մկրտչա-
կաններու անհաճոյ արշաւանքէն, ցաւ է արդարեւ
տեսնել ձօղէֆ Սիմի մը ինքնակոչ առաքեալ-
ները, որ Ամերիկեան Սիմի բարձունքէն ներշնչ-
ուած՝ միապաւար որոմներ կը սերմանեն այն
արգաւանդ հողին վրայ՝ զոր իւրեանց հայրենա-
կիցը կը մշակեն քրտնաթոր Ֆ. Հինչլի, այս նոր-
օրինակ միոստորաց զլիարարն, պիտի մեկնի
յերուսաղէմ, փոխանորդ թողլով երկու օգնա-
կանները: Սրբա տուն մը վարած են այժմ և
քարոզութեամբ կը ջատագովին իրենց դաւանու-
թիւնն: Այնթապի ժողովուրդն, արդէն Կիլիկիոյ
հայ-կաթողիկոսութեան, հայ-բողոքականութեան,
հայ-անգլիկանութեան և հայ-մկրտչականութեան
առաջին որոնք հանդիսացած լինելով, չը պիտի
յոժարի իւր թանցաղին անդամակցութիւնը այլոց
նորակն և պիտի ունենայ հայ-միոստորութեան
ներկայացուցիչ երջանիկ ընտանաւորութեան
միւլ: Յիշեալ միստիստը, անձնապէս բարեկրթ
և հմուտ անձինք, այցելութիւն տուած են մի
քանի հայ վարժարանաց, և տեսած են Հայոց
կրթական կացութիւնն անհամեմատ աւելի բարձ-
ր կան գործնական կենսական են:

Զմիւռնիայից գրում են հետեւեալը. «Լսուելով
թէ իզմիրի մօտ Նիֆի գաւառական այրերուն
մէջ որմալուծ (ֆլիւոր) ծագել է, իզմիրի
երկրաշարժական ընդհնը զրկուեցաւ անընդ-
միջ ընդհնութեան համար, և իւր տեղեկագրոյն հա-
մեմատ, որմալուծ չէ երեցածն, այլ քիւլլէ մէ,
որ յառաջ եկած է անձրեաց առատութեան
պատճառաւ այցիներուն մէջ ծծուկի կիրառու-
թեան դժուարութիւնէն: Այս մասնակի չարիքը
գարմանելու համար պէտք եղած միջոցներն ի
գործ կը դրուին»:

Երիտասարդ խորէն Նար-Պէյ եպիսկոպոսի ընդու-
նելութեան համար կ, Պոլսի լրագրողներն յու-
նիսի 20-ից գրած մանրամասնութիւններից քա-
ղաւում են հետեւեալը. Պոլսոյ փաշա Նուպար շա-
քաթ օրը իւր գիւղէն Աղթամարի ինքնելով
յատկապէս այցելութեան եկաւ խորէն Նար-Պէյ
Սրբապանին և առաջարկեց որ առաջնորդէ նրան
ի Պալատ խորիւն: Երկրորդ օրը, կիրակի, Նար-
Պէյ Սրբապան հրաւիրուեցաւ Ն. Բարձրութեան
ներկայացնալու. Բաղ-Լէ-Թիւնի պալատում մեծ դրան

առջև Նար-Պէյ Սրբապան ընդունուեցաւ արարո-
ղապետ Զէքի պէյի կողմէ, ապա զՆար-Պէյ Սրբա-
պան և հետեւողները խորիւնական շքեղ դահլիճն
գնացին, ուր յոյսն կանգնած էր Թէվֆիկ փաշա:
Ն. Բարձրութիւն մեծարանօք ընդունելով Սրբա-
պան այցելուն, պատուալից խօսքերով դոհու-
նակութիւն յայտնեց հայ-արքեպիսկոպոսն իւր
պալատան մէջ ընդունելուն համար: Սրբապանը
յայտնեց իրեն յիշատակ այցելութեան շարժա-
ռիթը, յորմէ օգտուելով փափաքած էր զալ իւր
յարգանքը մատուցանել Ն. Բարձրութեան, միան-
գամայն և նորա հաճութիւնն ընդունիլ Նիքիպոս-
տի մայրաքաղաքը, պալատներն և պատմական
վայրերն այցելելու համար: Փոխարքայն ախոր-
ժանօք լսեց այս խօսքերը և պատասխանեց թէ
ամենայն յօժարութեամբ կարտօնէ զՆ. Սրբա-
պանին: Խորիւնական պալատն մեկնելով, Նար-
Պէյ Սրբապան ուղղակի գնաց Ամէտ Մալիքար
փաշայի ապարանքը և այցելութիւն տուաւ կայ-
սերական բարձր Գովիսէրին որ սիրալիք ընդու-
նելութիւն մը քրաւաւ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պարիզից գրում են հետեւեալը. «Այստեղի
ուսանողներն մի պատգամաւորութիւն այցելու-
թիւն տուեց Գիլիանիին, որը չնորհակալու-
թիւն յայտնելով ուսանողներին, համակրութիւն
յայտնեց դէպի Ֆրանսիան: Ապա ուսանողներից
մէկը հարցրեց, արդե՞ր կարող է պատահել, որ
Յունաստանը միանայ երեքսկտեան դաշնակցու-
թեան: Գիլիանիս պատասխանեց, որ յոյն ազգը
չէ համակրում այդ տեսակ քաղաքականութեան,
և վերջապէս իր խօսքերը անելով, իսկ զուր
գիտէք, որ սահմանադրական երկրում կառավա-
րութիւնը միշտ պէտք է ենթարկվի ժողովրդի
կամքին»:

—Բաղէլի համալսարանի ուսանողները, խմանա-
լով որ Համբուրգի լրագրողներից մէկի մէջ տպա-
գրած յօդուածի ներկայացը, որը առաջարկում է
Շվեյցարիան բաժին-բաժին անել, իրանց պրո-
ֆէսորներից մէկն է, հրաժարելով այցելելու
նրա դասախօսութիւնները:

—Այս օրերս համայնքների ժողովին ուղղած
մի հաղորդագրութեան տակ անգլիական թագու-
հին ստորագրել էր այսպէս. «Վիկտորիա, թա-
գուհի—կայսրուհի: Ենթադրում են, որ այդ տե-
սակ տիտղոսը կարող է աղմուկ յարուցանել ժո-
ղովում, որովհետեւ 1876 թվ. կայացած որոշու-
մով Վիկտորիան կրում է Հնդկաստանի կայս-
րուհի տիտղոսը և այդ տիտղոսը պէտք է գործ
ածի Հնդկաստանի հետ ունեցած յարաբերութիւն-
ների ժամանակ:

—Բերլինից գրում են, որ Վիլհելմ կայսրը ու-
րախութիւն է յայտնել, որ Շվեյցարիայի հետ
պատահած տարաձայնութիւնները աւելի սուր
կերպարանք չը ստացան:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Առաջ ենք բերում մի քանի հատարակ միջոց-
ներ գործունէ կնէր (БОРОДЯВНИ) ոչնչացնելու
համար: Տալիս են առաւօտ և երեկոյ մի միջոց-
ի դրաւ այրուած մասնէն գիւղ, սրանից
գործունէները փորձում ու հաջողութեամբ են,
շատ հեշտ են քննելով և կամ իրանց իրանց
թափվում: Մագնիսիայի չորս շաքաթիկ անդու-
հատ գործածութիւնը ոչնչացնում է գործունէ-
ների բոլոր հնարները: Այս միջոցը գործ է ած-
վում նմանապէս և մագնիսիայի ու խալկի դէմ:
Կամ վերջում են իրանու կաշնուց, կամ ըն-
կուցենուց պատրաստած լուցիկանման մի
փայտ և շինելով նրա 3/4 կրակի մէջ այ-
րում են, և արտաքին ծայրից զուրս եկող
փրփուրով քսում են գործունէներին, կրկնելով
ամեն օր, մինչև գործունէների ոչնչանալը: Ծե-
ծած սխտորի և խողի ճարպի խառնուրդը ևս
ոչնչացնում է գործունէները:

Մեկ գրում են Օղէսայից, որ մի մագործ սիրա-
հարկան պատճառով մի սպանութիւն գործեց:
Այդ մագործը սիրահարական յարաբերութիւն
ունենալով մէկ ջահիլ կնոջ հետ, լսում է թէ նա
ուրիշներէ հետ էլ յարակցութիւն ունի և մանա-
ւանդ, երբ նոյն օրը յայտնում են, թէ նրա սիրու-
հին ուրիշների հետ նստած ճաշարանում ուրա-
խութիւն է անում, մագործը՝ կատաղած՝ ներս
մտնելով ճաշարան՝ իր զանալը խալկոյ խորում է
կնոջ կողքը, որը և անմիջապէս մեռնում է:
Ոստիկանութիւնը անմիջապէս վրա հասնելով,
սպանողին բռնում է, որը և խոստովանվում է,
թէ ինքն է սպանել: Ոստիկանատուն տանելիս
մագործը ճանապարհին բղաւկիւ է եղել. «այն
կինը ինձ վրա նստել է 20,000 րուբլի»:

6-8